

**Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2009 թվականի ապրիլի 23-ի 2009/15/ԵՀ
հրահանգ**

**Նավերի ստուգում եւ տեխնիկական զննում իրականացնող կազմակերպությունների ու
ծովագնացության կառավարման մարմինների համապատասխան գործողությունների
համար ընդհանուր կանոնների եւ ստանդարտների մասին**

Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ

Պաշտոնական տեղեկագիր L 131, 28.05.2009թ., էջեր 0047 - 0056

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը եւ,
մասնավորապես, դրա 80(2) հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը,

հաշվի առնելով Տնտեսական եւ սոցիալական հարցերով եվրոպական կոմիտեի
եզրակացությունը [1],

հաշվի առնելով Տարածաշրջանների հարցերով կոմիտեի եզրակացությունը [2],

գործելով Պայմանագրի 251-րդ հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն եւ
ելնելով Համաձայնեցման կոմիտեի կողմից 2009 թվականի փետրվարի 3-ին հաստատված
համատեղ տեքստից [3],

Քանի որ

1) «Նավերի ստուգում եւ տեխնիկական զննում իրականացնող կազմակերպությունների ու
ծովագնացության կառավարման մարմինների համապատասխան գործողությունների
համար ընդհանուր կանոնների եւ ստանդարտների մասին» Խորհրդի 1994 թվականի
նոյեմբերի 22-ի 94/57/ԵՀ հրահանգը [4] զգալիորեն փոփոխվել է մի քանի անգամ: Հաշվի
առնելով այն հանգամանքը, որ պահանջվում են լրացուցիչ փոփոխություններ, հրահանգը
պետք է վերամշակվի՝ տեքստում պարզություն մտցնելու նկատառումներով,

2) հաշվի առնելով 94/57/ԵՀ հրահանգի դրույթների բնույթը՝ նպատակահարմար է, որ դրանք վերաձեակերպվեն Համայնքի երկու տարբեր իրավական փաստաթղթերում, որոնք Հրահանգն ու Կանոնակարգն են,

3) «Անվտանգ ծովերի մասին ընդհանուր քաղաքականության մասին» 1993 թվականի հունիսի 8-ի իր որոշմամբ՝ Էստրիդի կողմից նպատակ է սահմանվել հեռացնելու սահմանված նորմերին չհամապատասխանող ծովային բոլոր փոխադրամիջոցները Համայնքի ջրային տարածքից եւ առաջնահերթություն է տրվել Համայնքի այն գործողություններին, որոնք ուղղված են միջազգային կանոնների արդյունավետ եւ միասնական պահպանմանը՝ դասակարգման կազմակերպությունների համար ընդհանուր ստանդարտներ մշակելու միջոցով,

4) ծովում անվտանգության եւ աղտոտվածության կանխարգելման մակարդակը կարող է արդյունավետ կերպով բարձրացվել միջազգային կոնվենցիաները, կանոնագրքերը եւ որոշումները խստորեն կիրառելու միջոցով՝ միեւնույն ժամանակ նպաստելով ծառայություններ մատուցելու ազատության նպատակի իրականացմանը,

5) նավերի՝ ծովերում անվտանգության եւ աղտոտվածության կանխարգելման միասնական միջազգային ստանդարտներին համապատասխանության վերահսկողությունը ծովային փոխադրամիջոցի դրոշի պետությունների եւ տվյալ նավահանգստի պետությունների պատասխանատվությունն է,

6) անդամ պետությունները պատասխանատու են անվտանգության եւ աղտոտվածության կանխարգելման համար միջազգային հավաստագրերի տրամադրման՝ նախատեսված այնպիսի կոնվենցիաներով, ինչպես, օրինակ՝ 1974 թվականի նոյեմբերի 1-ի «Ծովում մարդու կյանքի անվտանգության մասին» միջազգային կոնվենցիան (SOLAS 74), 1966 թվականի ապրիլի 5-ի «Բեռնման նշագծերի մասին» միջազգային կոնվենցիան, «Նավերից առաջացող աղտոտումը կանխարգելելու մասին» միջազգային կոնվենցիան (Marpol), եւ այդ կոնվենցիաների իրականացման համար,

7) նշված կոնվենցիաներին համապատասխան՝ բոլոր անդամ պետությունները կարող են ճանաչված կազմակերպություններին տարբեր աստիճանի լիազորություններ շնորհել նման համապատասխանության հավաստագրման համար եւ կարող են պատվիրակել անվտանգության եւ աղտոտման կանխարգելման համար համապատասխան հավաստագրերի տրամադրման գործառույթը,

8) ամբողջ աշխարհում, Ծովային միջազգային կազմակերպության (ԾՄԿ) Պայմանավորվող կողմերի կողմից ճանաչված մեծ թվով կազմակերպություններ, իրենց ազգային կառավարման մարմինների անունից գործելիս, չեն ապահովում ոչ կանոնների պատշաճ կատարում եւ ոչ էլ բավականաչափ հուսալիություն, քանի որ չունեն հուսալի եւ համապատասխան կառույցներ ու փորձ, ինչի առկայությունը նրանց հնարավորություն կտար կատարելու իրենց պարտականությունները՝ ապահովելով մասնագիտական բարձր որակ,

9) SOLAS 74-ի II-1 գլխի Ա-1 մասի 3-1 կարգավորման համաձայն՝ անդամ պետությունները պատասխանատու են ապահովելու, որ իրենց դրոշի ներքո նավարկող նավերի նախագծումը, կառուցումը եւ տեխնիկական սպասարկումն իրականացվի կառավարման մարմինների կողմից ճանաչված կազմակերպությունների կառուցվածքային, մեխանիկական եւ էլեկտրականության նկատմամբ սահմանված պահանջներին համապատասխան:

Հետեւաբար, այս կազմակերպությունները նավերի նախագծման, կառուցման, տեխնիկական սպասարկման եւ ստուգման համար կանոններ են ստեղծում ու կիրարկում եւ նրանք են պատասխանատու ծովային փոխադրամիջոցի դրոշի պետությունների անունից նավերը ստուգելու համար եւ հավաստելու, որ համապատասխան հավաստագրերի տրամադրման համար այդ նավերը բավարարում են միջազգային կոնվենցիաների պահանջները:

Այդ պարտականությունը բավարար չափով կատարելու համար նրանք պետք է ունենան որոշակի անկախություն, նեղ մասնագիտական տեխնիկական կարողություններ եւ իրականացնեն որակի ճշգրիտ կառավարում,

10) նավերի ստուգում եւ տեխնիկական զննում իրականացնող կազմակերպությունները կարելու էր ունեն ծովում անվտանգության վերաբերյալ Համայնքի օրենսդրության մեջ,

11) նավերի ստուգում եւ տեխնիկական զննում իրականացնող կազմակերպությունները պետք է կարողանան իրենց ծառայություններն առաջարկել Համայնքի ամբողջ տարածքում եւ մրցակցել միմյանց հետ՝ ապահովելով անվտանգության եւ շրջակա միջավայրի պաշտպանության հավասար մակարդակներ: Հետեւաբար, Համայնքի ամբողջ տարածքում պետք է միասնականորեն սահմանվեն եւ կիրառվեն նրանց գործողությունների համար անհրաժեշտ մասնագիտական ստանդարտները,

12) բեռնատար նավի ռադիոսարքավորումների գծով անվտանգության հավաստագրի տրամադրումը կարող է վերապահվել բավականաչափ փորձ եւ որակավորված անձնակազմ ունեցող մասնավոր կազմակերպությունների,

13) անդամ պետությունը կարող է սահմանափակել ճանաչված կազմակերպությունների թիվը, որոնց այն լիազորում է իր կարիքներից ելնելով՝ օբյեկտիվ եւ թափանցիկ հիմքերի առկայության դեպքում, ինչի նկատմամբ պետք է Հանձնաժողովի կողմից իրականացվի վերահսկողություն՝ Կոմիտեի ընթացակարգին համապատասխան,

14) սույն Հրահանգը պետք է ապահովի Համայնքում ծառայություններ մատուցելու ազատությունը, ըստ այդմ, Համայնքը պետք է համաձայնի այն երրորդ երկրների հետ, որոնց տարածքում են տեղակայված ճանաչված կազմակերպություններից մի քանիսը՝ Համայնքում տեղակայված ճանաչված կազմակերպությունների նկատմամբ հավասար պայմանակարգ (ռեժիմ) ապահովելու համար,

15) ազգային կառավարման մարմինների անմիջական ներգրավումը նավի տեխնիկական զննումներին եւ դրանց հետ կապված հավաստագրերի տրամադրմանն անհրաժեշտ է՝ անվտանգության միջազգային կանոնների լիակատար պահպանումն ապահովելու համար, նույնիսկ այն դեպքում, երբ անդամ պետությունները վստահում են ճանաչված կազմակերպություններին, որոնք, օրենքով սահմանված պարտականությունների կատարման առումով, իրենց կառավարման մասը չեն կազմում: Հետեւաբար, անհրաժեշտ է սերտ աշխատանքային հարաբերություններ ձեւավորել կառավարման մարմինների եւ դրանց կողմից լիազորված ճանաչված կազմակերպությունների միջեւ, ինչի համար կարող է պահանջվել, որ ճանաչված կազմակերպություններն ունենան տեղական ներկայացուցչություն այն անդամ պետության տարածքում, որի անունից նրանք կատարում են իրենց պարտականությունները,

16) երբ ճանաչված կազմակերպությունը, դրա տեսուչները կամ տեխնիկական անձնակազմը կառավարման մարմնի անունից տրամադրում են համապատասխան հավաստագրերը, անդամ պետությունները պետք է քննարկեն, այս պատվիրակված գործողությունների իրականացման առումով, նրանց համար համաչափ իրավական երաշխիքներ եւ դատական պաշտպանություն ապահովելու հնարավորությունը՝ ներառյալ պաշտպանության համապատասխան իրավունքների իրականացումը՝ բացառությամբ անձեռնմխելիության, որը բացառիկ իրավունք է եւ անդամ պետությունների կողմից կարող

է վկայակոչվել որպես ինքնիշխանության անբաժանելի իրավունք եւ, հետեւաբար, չի կարող պատվիրակվել,

17) անդամ պետության անունից գործող ճանաչված կազմակերպությունների միջեւ ֆինանսական պարտավորությունների ռեժիմների հետ կապված տարբերությունը կարող է խոչընդոտել սույն Հրահանգի պատշաճորեն իրականացումը: Այս խնդրի լուծմանը նպաստելու համար անհրաժեշտ է ճանաչված կազմակերպության պատճառով ծովային որեւէ վթարից բխող պատասխանատվության համար Համայնքի մակարդակով ապահովել համապատասխանության նույն մակարդակը՝ դատարանի որոշմամբ, ինչպես նաեւ վեճի կարգավորման արբիտրաժային վարույթներին համապատասխան,

18) սույն Հրահանգի իրականացման համար անհրաժեշտ ակտերը պետք է ընդունվեն Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգերը սահմանող՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի 1999/468/ԵՀ որոշման համաձայն [5],

19) մասնավորապես, Հանձնաժողովը պետք է ունենա սույն Հրահանգում փոփոխություններ կատարելու լիազորություն՝ հետագա փոփոխությունները դրան առնչվող միջազգային կոնվենցիաներում, արձանագրություններում, օրենսգրքերում եւ որոշումներում ներառելու համար: Քանի որ այդ ակտերն ընդհանուր բնույթ են կրում եւ նախատեսված են սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար՝ ի թիվս այլոց այն լրացնելով նոր ոչ էական տարրերով, դրանք պետք է ընդունվեն 1999/468/ԵՀ որոշման 5(ա) հոդվածով նախատեսված՝ մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան,

20) անդամ պետությունները, այնուամենայնիվ, պետք է հնարավորություն ունենան կասեցնել կամ հետ վերցնել ճանաչված կազմակերպություններին շնորհված թույլտվությունը՝ Հանձնաժողովին եւ մյուս անդամ պետություններին տեղեկացնելով իրենց որոշումների մասին եւ ներկայացնելով դրանց կայացման հիմնավորված պատճառները,

21) անդամ պետությունները պետք է պարբերաբար գնահատեն իրենց անունից գործող ճանաչված կազմակերպությունների կատարողականը եւ Հանձնաժողովին ու մյուս բոլոր անդամ պետություններին այդ կատարողականի վերաբերյալ տրամադրեն ճշգրիտ տեղեկություններ,

22) որպես նավահանգստի ղեկավարներ՝ անդամ պետությունները պետք է Համայնքի ջրային տարածքներում ուժեղացնեն անվտանգությունը եւ աղտոտվածության

կանխարգելումը ընդհանուր չափորոշիչները չբավարարող կազմակերպությունների կողմից տրամադրված հավաստագրեր ունեցող նավերի առաջնային ստուգման միջոցով՝ այդպիսով ապահովելով երրորդ պետության դրոշի ներքո նավարկող նավերի նկատմամբ առավել բարենպաստ պայմանակարգի (ռեժիմի) կիրառման բացառումը,

23) ներկայումս գոյություն չունեն այնպիսի միասնական միջազգային ստանդարտներ նավի կորպուսի, մեխանիզմների, էլեկտրակայանքի եւ կառավարման սարքավորումների վերաբերյալ, որոնց համապատասխանությունը բոլոր նավերի համար դրանց կառուցման փուլում պարտադիր լինի, ինչպես նաեւ դրանց շահագործման ամբողջ ընթացքում: Նման ստանդարտներ կարող են սահմանվել ճանաչված կազմակերպությունների կանոնների համաձայն կամ տեխնիկական ստանդարտների եւ կանոնակարգերի ու Տեղեկատվական հասարակության ծառայությունների մասին կանոնների ոլորտում տեղեկությունների տրամադրման ընթացակարգը սահմանող՝ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 1998 թվականի հունիսի 22-ի 98/34/ԵՀ հրահանգում [6] սահմանված ընթացակարգի համաձայն՝ ազգային կառավարման մարմինների կողմից սահմանվելիք համարժեք ստանդարտներին համապատասխան,

24) քանի որ սույն Հրահանգի նպատակը, այն է՝ սահմանել ակտեր, որոնցով անդամ պետությունները պետք է առաջնորդվեն այն կազմակերպությունների հետ իրենց հարաբերություններում, որոնց վստահված է Համայնքում շահագործվող նավերի ստուգումը, տեխնիկական զննումը եւ հավաստագրումը, չի կարող բավարար չափով իրականացվել անդամ պետությունների կողմից եւ, հետեւաբար, գործողության մասշտաբով պայմանավորված, կարող է ավելի լավ իրականացվել Համայնքի մակարդակով, Համայնքը կարող է ընդունել ակտեր՝ Պայմանագրի 5-րդ հոդվածում սահմանված լրացուցչության սկզբունքի համաձայն: Համաչափության սկզբունքին համապատասխան, ինչպես սահմանված է այդ հոդվածով, սույն Հրահանգը չի սահմանազանցում այդ նպատակի իրագործման համար անհրաժեշտ միջոցների շրջանակը,

25) ազգային իրավունքում սույն Հրահանգը փոխատեղելու պարտավորությունը պետք է սահմանափակվի այն դրույթներով, որոնք, 94/57/ԵՀ հրահանգի համեմատությամբ, էապես տարբեր նորմեր են սահմանում: Չփոփոխված դրույթները փոխատեղելու պարտավորությունը բխում է այդ հրահանգից,

26) սույն Հրահանգը չպետք է հակասի I հավելվածի Բ մասով սահմանված՝ հրահանգները ազգային իրավունքում փոխաստեղծելու ժամկետների վերաբերյալ անդամ պետությունների պարտավորություններին,

27) «Բարելավված օրինաստեղծ գործունեության մասին» միջինստիտուցիոնալ համաձայնագրի 34–րդ կետի համաձայն [7], անդամ պետությունները խրախուսվում են, իրենց եւ Համայնքի շահերից ելնելով, կազմելու եւ հրապարակելու իրենց սեփական աղյուսակները, որոնց մեջ հնարավորինս կներկայացվի սույն Հրահանգի եւ փոխաստեղծման միջոցների փոխկապակցվածությունը,

28) այն ակտերը, որոնցով պետք է առաջնորդվեն ստուգում եւ տեխնիկական զննում իրականացնող կազմակերպությունները, սահմանված են «Նավերի ստուգում եւ տեխնիկական զննում իրականացնող կազմակերպությունների համար ընդհանուր կանոնների ու ստանդարտների մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2009 թվականի ապրիլի 23–ի թիվ 391/2009 կանոնակարգում (ԵՀ) (վերամշակված)[8],

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

Հոդված 1

Սույն Հրահանգով սահմանվում են այնպիսի ակտեր, որոնցով անդամ պետությունները պետք է առաջնորդվեն այն կազմակերպությունների հետ իրենց հարաբերություններում, որոնց վստահված է նավերի ստուգումը, տեխնիկական զննումը եւ հավաստագրումը ծովում անվտանգության եւ ծովային միջավայրի աղտոտման կանխարգելման մասին միջազգային կոնվենցիաներին համապատասխանությունն ապահովելու համար՝ միեւնույն ժամանակ նպաստելով ծառայություններ մատուցելու ազատության նպատակի իրականացմանը: Այն ներառում է միջազգային կոնվենցիաների գործողության ոլորտում ընդգրկված նավերի կորպուսների, մեխանիզմների, էլեկտրակայանքի եւ կառավարման սարքավորումների նկատմամբ անվտանգության պահանջների մշակումն ու իրականացումը:

Հոդված 2

Սույն Հրահանգի նպատակով կիրառվում են հետեւյալ սահմանումները՝

ա) նավ՝ միջազգային կոնվենցիաների գործողության ոլորտում ընդգրկված նավ,

բ) անդամ պետության դրոշի ներքո նավարկող նավ՝ անդամ պետությունում՝ վերջինիս օրենսդրության համաձայն գրանցված եւ դրա դրոշի ներքո նավարկող նավ: Այս սահմանմանը չհամապատասխանող նավերը համարվում են երրորդ երկրի դրոշի ներքո նավարկող նավեր,

գ) ստուգում եւ տեխնիկական զննում՝ ստուգումներ եւ տեխնիկական զննումներ, որոնք պարտադիր են՝ համաձայն միջազգային կոնվենցիաների,

դ) միջազգային կոնվենցիաներ՝ 1974 թվականի նոյեմբերի 1-ի «Ծովում մարդու կյանքի անվտանգության մասին» միջազգային կոնվենցիան (SOLAS 74)՝ բացառությամբ դրա հավելվածի XI-2 գլխի, 1966 թվականի ապրիլի 5-ի «Բեռնման նշագծերի մասին» միջազգային կոնվենցիան եւ 1973 թվականի նոյեմբերի 2-ի «Նավերից առաջացող աղտոտման կանխարգելման» միջազգային կոնվենցիան (Marpol)՝ դրա արձանագրությունների եւ դրանում կատարված փոփոխությունների հետ միասին եւ բոլոր անդամ պետություններում պարտադիր ուժ ունեցող համապատասխան օրենսգրքերը՝ իրենց թարմացված տարբերակներով,

ե) կազմակերպություն՝ իրավաբանական անձ, դրա դուստր ձեռնարկությունները եւ դրա հսկողության ներքո գտնվող մյուս ընկերությունները, որոնք համատեղ կամ առանձին-առանձին կատարում են սույն Հրահանգի գործողության ոլորտում ընդգրկված առաջադրանքները,

զ) հսկողություն (ե) կետի նպատակներով՝ իրավունքներ, պայմանագրեր կամ օրենքով կամ փաստացի սահմանված ցանկացած այլ միջոցներ, որոնք առանձին-առանձին կամ միասին հնարավորություն են տալիս որոշիչ ազդեցություն ունենալու իրավաբանական անձի վրա կամ հնարավոր են դարձնում վերջինիս կողմից սույն Հրահանգի գործողության ոլորտում ընդգրկված առաջադրանքների կատարումը,

է) ճանաչված կազմակերպություն՝ թիվ 391/2009 կանոնակարգի (ԵՀ) համաձայն ճանաչված կազմակերպություն,

ը) թույլտվություն՝ ակտ, որի միջոցով անդամ պետությունը թույլտվություն է շնորհում կամ լիազորություններ պատվիրակում ճանաչված կազմակերպությանը,

թ) օրենքով նախատեսված հավաստագիր՝ ծովային փոխադրամիջոցի դրոշի պետության կողմից կամ նրա անունից՝ միջազգային կոնվենցիաների համաձայն տրամադրված հավաստագիր,

ժ) կանոններ եւ ընթացակարգեր՝ նավերի նախագծմանը, կառուցմանը, սարքավորումներով ապահովմանը, տեխնիկական սպասարկմանը եւ տեխնիկական զննմանը ներկայացվող ճանաչված կազմակերպության պահանջներ,

ժա) դասակարգման հավաստագիր՝ ճանաչված կազմակերպության կողմից տրամադրված փաստաթուղթ, որը հավաստում է նավի պիտանելիությունը որոշակի նպատակով օգտագործելու կամ ծառայություն մատուցելու համար՝ տվյալ ճանաչված կազմակերպության կողմից սահմանված եւ հրապարակված կանոնների ու ընթացակարգերի համաձայն,

ժբ) բեռնատար նավի ռադիոսարքավորումների գծով անվտանգության հավաստագիր՝ SOLAS-ը փոփոխող՝ 1988 թվականի արձանագրությամբ ներդրված հավաստագիր՝ ընդունված Ծովային միջազգային կազմակերպության (ԾՄԿ) կողմից:

Հոդված 3

1. Միջազգային կոնվենցիաների համաձայն իրենց պարտականությունները եւ պարտավորությունները ստանձնելիս՝ անդամ պետություններն ապահովում են, որ իրենց իրավասու կառավարման մարմինները կարողանան ապահովել դրանց դրույթների պատշաճ կատարումը, մասնավորապես՝ կապված նավերի ստուգման եւ տեխնիկական զննման, ինչպես նաեւ օրենքով նախատեսված հավաստագրերի եւ ազատման հավաստագրերի տրամադրման հետ՝ միջազգային կոնվենցիաներով նախատեսված կարգով: Անդամ պետությունները գործում են «ԾՄԿ-ի փաստաթղթերի դրույթների իրականացման հարցում դրոշի պետություններին օժանդակելուն ուղղված ուղեցույցների մասին» ԾՄԿ-ի Ա.847(20) որոշման հավելվածի եւ հավելման համապատասխան դրույթների համաձայն:

2. Այն դեպքում, երբ 1-ին պարբերության նպատակով անդամ պետությունն, իր դրոշի ներքո նավարկող նավերի առնչությամբ, որոշում է.

i) լիազորել կազմակերպություններին ամբողջությամբ կամ մասամբ հանձն առնել օրենքով նախատեսված հավաստագրերի հետ կապված, այդ թվում՝ 11(2) հոդվածում նշված կանոնների հետ համապատասխանության գնահատման համար ստուգումների ու տեխնիկական զննումների իրականացումը եւ, անհրաժեշտության դեպքում, տրամադրել կամ նորացնել համապատասխան հավաստագրերը, կամ

ii) վստահ լինել, որ կազմակերպություններն ամբողջությամբ կամ մասամբ հանձն կառնեն (i) կետում նշված ստուգումների եւ տեխնիկական զննումների իրականացումը.

այս պարտականությունների կատարումը վերապահվում է միայն ճանաչված կազմակերպություններին:

Իրավասու կառավարման մարմինները բոլոր դեպքերում հաստատում են ազատման հավաստագրերի առաջին տրամադրումը:

Այնուամենայնիվ, բեռնատար նավի ռադիոսարքավորումների գծով անվտանգության հավաստագրի համար այս պարտականությունների կատարումը կարող է վերապահվել իրավասու կառավարման մարմնի կողմից ճանաչված եւ բավականաչափ փորձ ու որակավորված անձնակազմ ունեցող մասնավոր կազմակերպությանը՝ իր անունից ռադիոկապի վերաբերյալ նշված անվտանգության գնահատման աշխատանքն իրականացնելու նպատակով:

3. Սույն հոդվածը չի վերաբերում նավային սարքավորումների կոնկրետ մասերի հավաստագրմանը:

Հոդված 4

1. 3(2) հոդվածը կիրառելիս՝ անդամ պետություններն, ըստ էության, չեն հրաժարվում լիազորել ճանաչված որեւէ կազմակերպության՝ ստանձնելու նման գործառույթներ՝ սույն հոդվածի 2-րդ պարբերության եւ 5-րդ ու 9-րդ հոդվածների դրույթների պահպանմամբ: Այնուամենայնիվ, նրանք կարող են սահմանափակել այն կազմակերպությունների թիվը, որոնց լիազորում են իրենց կարիքներից ելնելով՝ պայմանով, որ նման կերպ վարվելու համար լինեն թափանցիկ եւ օբյեկտիվ հիմքեր:

Անդամ պետության խնդրանքով՝ Հանձնաժողովը, 6(2) հոդվածում նշված կարգավորիչ ընթացակարգին համապատասխան, ընդունում է համապատասխան ակտեր՝ թույլտվության մերժման հետ կապված սույն պարբերության առաջին ենթապարբերության եւ թույլտվության կասեցման կամ հետ վերցման դեպքերին առնչվող 8-րդ հոդվածի ճշգրիտ կիրառումն ապահովելու նպատակով:

2. Որպեսզի անդամ պետությունն ընդունի, որ երրորդ պետությունում գտնվող ճանաչված կազմակերպությունը պետք է լիովին կամ մասամբ կատարի 3-րդ հոդվածում նշված

պարտականությունները, այն կարող է տվյալ երրորդ երկրից պահանջել փոխադարձ պայմանակարգի (ռեժիմի) տրամադրում այն ճանաչված կազմակերպություններին, որոնք տեղակայված են Համայնքում:

Բացի դրանից՝ Համայնքը կարող է պահանջել այն երրորդ երկրից, որտեղ տեղակայված է ճանաչված կազմակերպությունը, փոխադարձ պայմանակարգի (ռեժիմի) տրամադրում այն ճանաչված կազմակերպություններին, որոնք տեղակայված են Համայնքում:

Հոդված 5

1. Այն անդամ պետությունները, որոնք որոշում են կայացնում 3(2) հոդվածում նկարագրվածի համաձայն, «աշխատանքային հարաբերություններ» են ձեւավորում իրենց իրավասու կառավարման մարմնի եւ իրենց անունից գործող կազմակերպությունների միջեւ:

2. Աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են պաշտոնապես ընդունված գրավոր եւ ոչ խտրական համաձայնագրով կամ համարժեք իրավական կարգավորումներով, որոնցով սահմանվում են կազմակերպությունների կողմից ստանձնած կոնկրետ պարտականությունները եւ գործառույթները՝ ներառելով առնվազն.

ա) «Կառավարման մարմնի անունից գործող կազմակերպություններին թույլտվության շնորհման ուղեցույցների մասին» ԾՄԿ –ի Ա.739(18) որոշման II հավելվամբ սահմանված դրույթները՝ միեւնույն ժամանակ ոգեշնչվելով «Կառավարման մարմնի անունից գործող կազմակերպություններին թույլտվության շնորհման օրինակելի համաձայնագրի մասին» ԾՄԿ–ի Ծովային անվտանգության կոմիտեի (MSC)/ 710–րդ շրջաբերականի եւ Ծովային միջավայրի պաշտպանության կոմիտեի (MEPC)/ 307–րդ շրջաբերականի հավելումից, հավելվածներից եւ դրանց կից ներկայացված փաստաթղթերից,

բ) ֆինանսական պարտավորությանն առնչվող հետեւյալ դրույթները.

i) եթե ծովային որեւէ վթարից բխող պատասխանատվությունը, գույքի կորստի կամ վնասվածքի, կամ անձնական վնաս,ի կամ մահվան դիմաց տուժած կողմերին փոխհատուցելու պահանջի հետ միասին (ինչը տվյալ դատարանի որոշմամբ ապացուցվում է որպես ճանաչված կազմակերպության, դրա կառույցների, աշխատակիցների, գործակալների կամ ճանաչված կազմակերպության անունից գործող այլ անձանց կանխամտածված գործողության կամ վրիպման, կամ ծայրահեղ անփութության արդյունք)՝ դատարանի որոշմամբ կամ, որպես վեճի կարգավորման մաս, արբիտրաժային

վարույթների միջոցով վերջնականապես եւ հստակորեն կիրառվում է կառավարման մարմնի նկատմամբ, ապա կառավարման մարմինն ունի ճանաչված կազմակերպությունից ֆինանսական փոխհատուցում ստանալու իրավունք այնքանով, որքանով այդ կորուստը, վնասվածքը, վնասը կամ մահը, տվյալ դատարանի որոշման համաձայն, պատճառվել է ճանաչված կազմակերպության կողմից,

ii) եթե ծովային որեւէ վթարից բխող պատասխանատվությունը, անձնական վնասի կամ մահվան դիմաց տուժած կողմերին փոխհատուցելու պահանջի հետ միասին (ինչը տվյալ դատարանի որոշմամբ ապացուցվում է որպես ճանաչված կազմակերպության, դրա աշխատակիցների, գործակալների կամ ճանաչված կազմակերպության անունից գործող այլ անձանց անփույթ կամ անզգույշ գործողության կամ վրիպման արդյունք)՝ դատարանի որոշմամբ կամ, որպես վեճի կարգավորման մաս, արբիտրաժային վարույթների միջոցով վերջնականապես եւ հստակորեն կիրառվում է կառավարման մարմնի նկատմամբ, ապա կառավարման մարմինը ճանաչված կազմակերպությունից ֆինանսական փոխհատուցում ստանալու իրավունք ունի այնքանով, որքանով այդ անձնական վնասը կամ մահը, տվյալ դատարանի որոշման համաձայն, պատճառվել է ճանաչված կազմակերպության կողմից. անդամ պետությունը կարող է սահմանափակել ճանաչված կազմակերպության կողմից վճարվելիք առավելագույն գումարի չափը, ինչն, այնուամենայնիվ, պետք է առնվազն հավասար լինի 4 միլիոն եվրոյի,

iii) եթե ծովային որեւէ վթարից բխող պատասխանատվությունը, գույքի կորստի կամ վնասվածքի դիմաց տուժած կողմերին փոխհատուցելու պահանջի հետ միասին (ինչը տվյալ դատարանի որոշմամբ ապացուցվում է որպես ճանաչված կազմակերպության, դրա աշխատակիցների, գործակալների կամ ճանաչված կազմակերպության անունից գործող այլ անձանց անփույթ կամ անզգույշ գործողության կամ վրիպման արդյունք)՝ դատարանի որոշմամբ կամ, որպես վեճի կարգավորման մաս, արբիտրաժային վարույթների միջոցով վերջնականապես եւ հստակորեն կիրառվում է կառավարման մարմնի նկատմամբ, ապա կառավարման մարմինն ունի ճանաչված կազմակերպությունից ֆինանսական փոխհատուցում ստանալու իրավունք այնքանով, որքանով այդ կորուստը կամ վնասը, տվյալ դատարանի որոշման համաձայն, պատճառվել է ճանաչված կազմակերպության կողմից. անդամ պետությունը կարող է սահմանափակել ճանաչված կազմակերպության կողմից վճարվելիք առավելագույն գումարի չափը, ինչն, այնուամենայնիվ, պետք է առնվազն հավասար լինի 2 միլիոն եվրոյի,

զ) կառավարման մարմնի կամ կառավարման մարմնի կողմից նշանակված անկողմնակալ արտաքին մարմնի կողմից՝ նրա անունից կազմակերպությունների կողմից ստանձնած պարտականությունները պարբերաբար իրականացվող աուդիտի համար դրույթները՝ 9(1) հոդվածում նշվածի համաձայն,

դ) նավերի անսպասելի եւ մանրակրկիտ ստուգում կատարելու հնարավորությունը,

ե) դրանց դասակարգված նավատորմի եւ դասի փոփոխությունների, կասեցումների եւ դասից զրկելու դեպքերի մասին էական տեղեկությունների պարտադիր զեկուցման համար դրույթները:

3. Համաձայնագրով կամ համարժեք իրավական կարգավորմամբ՝ ճանաչված կազմակերպությունից կարող է պահանջվել տեղական ներկայացուցչություն ունենալ այն անդամ պետության տարածքում, որի անունից այն կատարում է 3-րդ հոդվածում նշված պարտականությունները: Անդամ պետության օրենսդրության համաձայն եւ իր ազգային դատարանների իրավասության պահպանմամբ՝ իրավաբանական անձի կարգավիճակով տեղական ներկայացուցչությունը կարող է բավարարել նման պահանջը:

4. Յուրաքանչյուր անդամ պետություն Հանձնաժողովին ճշգրիտ տեղեկություններ է տրամադրում սույն հոդվածի համաձայն ձեւավորված աշխատանքային հարաբերությունների մասին: Հանձնաժողովը հետագայում դրա մասին տեղեկացնում է իր մյուս անդամ պետություններին:

Հոդված 6

1. Հանձնաժողովին աջակցում է Անվտանգ ծովերի եւ նավերից առաջացող աղտոտումը կանխարգելող կոմիտեն (ԱԾՆԱԿ), որն ստեղծվել է Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ 2099/2002 կանոնակարգով (ԵՀ)[9]:

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն պարբերությանը, կիրառվում են 1999/468/ԵՀ որոշման 5-րդ եւ 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով սահմանված ժամկետը երեք ամիս է:

3. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն պարբերությանը, կիրառվում են 1999/468/ԵՀ որոշման 5(ա)(1)–(4) եւ 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

Հոդված 7

1. Սույն Հրահանգը կարող է, առանց ընդլայնելու իր գործողության ոլորտը, փոփոխվել, նպատակ ունենալով.

ա) սույն Հրահանգի նպատակների համար ներառել միջազգային կոնվենցիաներում, արձանագրություններում, օրենսգրքերում եւ որոշումներում՝ 2(դ), 3(1) եւ 5(2) հոդվածներում նշված՝ դրա հետ կապված հետագա փոփոխությունները, որոնք ուժի մեջ են մտել,

բ) փոփոխել 5(2)(բ) հոդվածի (ii) եւ (iii) կետերում նշված գումարների չափերը:

Սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված այս ակտերը պետք է ընդունվեն 6(3) հոդվածում նշված՝ մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

2. 2(դ) հոդվածում նշված միջազգային կոնվենցիաների նոր փաստաթղթերի կամ արձանագրությունների ընդունումից հետո Հանձնաժողովը, գործելով Հանձնաժողովից ստացված առաջարկության հիման վրա, որոշում է կայացնում այս նոր փաստաթղթերը կամ արձանագրությունները վավերացնելու մանրամասն կարգավորումների վերաբերյալ՝ հաշվի առնելով անդամ պետությունների խորհրդարանական ընթացակարգերը, ինչպես նաեւ ԾՄԿ-ի շրջանակում գործող համապատասխան ընթացակարգերը՝ ապահովելով դրանց միասնական եւ միաժամանակյա կիրառությունն անդամ պետություններում:

2(դ) հոդվածում եւ 5-րդ հոդվածում նշված միջազգային փաստաթղթերում փոփոխությունները կարող են չընդգրկվել սույն Հրահանգի գործողության ոլորտում՝ թիվ 2099/2002 կանոնակարգի (ԵՀ) 5-րդ հոդվածի համաձայն:

Հոդված 8

Չնայած թիվ 391/2009 կանոնակարգի (ԵՀ) I հավելվածում նշված նվազագույն չափորոշիչներին՝ եթե անդամ պետությունը կարծում է, որ ճանաչված կազմակերպությունն այլեւս չի կարող լիազորված լինել՝ իր անունից կատարելու 3-րդ հոդվածում նշված առաջադրանքները, ապա այն կարող է կասեցնել կամ հետ վերցնել այդ թույլտվությունը: Նման դեպքում անդամ պետությունն անմիջապես Հանձնաժողովին եւ մյուս անդամ պետություններին տեղեկացնում է իր որոշման մասին՝ ներկայացնելով դրա կայացման հիմնավորված պատճառները:

Հոդված 9

1. Յուրաքանչյուր անդամ պետություն պետք է համոզվի, որ 3(2) հոդվածի նպատակների համար իր անունից գործող ճանաչված կազմակերպություններն արդյունավետորեն իրականացնում են այդ հոդվածում նշված գործառույթները՝ բավարարելով իրենց իրավասու կառավարման մարմնի պահանջները:

2. 1-ին պարբերությունում նշված առաջադրանքն իրականացնելու համար, յուրաքանչյուր անդամ պետություն, առնվազն երկու տարին մեկ անգամ, իրականացնում է իր անունից գործող յուրաքանչյուր ճանաչված ընկերության գործունեության դիտանցումը եւ մյուս անդամ պետություններին ու Հանձնաժողովին հաշվետվություն է տրամադրում նման դիտանցման գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ ամենաուշը մինչեւ դիտանցումն իրականացնելու հաջորդող տարվա մարտի 31-ը:

Հոդված 10

Անդամ պետությունները, որպես նավահանգստի պետություններ, իրենց ստուգման իրավունքներն ու պարտավորություններն իրականացնելիս, զեկուցում են Հանձնաժողովին եւ մյուս անդամ պետություններին եւ տեղեկացնում համապատասխան դրոշի պետություններին այն դեպքում, երբ նրանք կարծում են, որ օրենքով նախատեսված վավերական հավաստագրերը դրոշի պետության անունից գործող ճանաչված կազմակերպությունների կողմից տրամադրվել են այնպիսի նավի, որը չի բավարարում միջազգային կոնվենցիաների համապատասխան պահանջները կամ՝ վավերական դասակարգման հավաստագիր ունեցող նավի եւ այդ հավաստագրում ընդգրկված կետերի հետ կապված որեւէ թերության առկայության դեպքում: Սույն հոդվածի նպատակներով՝ կզեկուցվեն միայն նավերի՝ անվտանգության ու շրջակա միջավայրի համար լուրջ վտանգ ներկայացնելու եւ ճանաչված կազմակերպությունների առանձնապես անփույթ վարքագծի դրսևորման մասին վկայող դեպքերը: Համապատասխան ճանաչված կազմակերպությունը դեպքի մասին կտեղեկացվի նախնական ստուգման ժամանակ, այնպես որ այն կարողանա անհապաղ ձեռնարկել հետագա համապատասխան գործողություններ:

Հոդված 11

1. Յուրաքանչյուր անդամ պետություն ապահովում է, որ իր դրոշի ներքո նավարկող նավերի նախագծումը, կառուցումը, սարքավորումներով ապահովումը, տեխնիկական սպասարկումն իրականացվի ճանաչված կազմակերպության՝ կորպուսի, մեխանիզմների, էլեկտրակայանքի եւ կառավարման սարքավորումների պահանջների հետ կապված կանոններին եւ ընթացակարգերին համապատասխան:

2. Անդամ պետությունը կարող է որոշել կիրառել այն կանոնները, որոնք այն համարում է ճանաչված կազմակերպության կանոններին եւ ընթացակարգերին համարժեք միայն այն պայմանով, որ դրանց մասին անմիջապես ծանուցվի Հանձնաժողովին՝ 98/34/ԵՀ հրահանգով նախատեսված ընթացակարգին համապատասխան եւ մյուս անդամ պետություններին, եւ որ դրանց նկատմամբ առարկություններ չեն ներկայացվում մեկ այլ անդամ պետության կամ Հանձնաժողովի կողմից, եւ որ դրանք, սույն Հրահանգի 6(2) հոդվածում նշված կարգավորիչ ընթացակարգի միջոցով, համարվեն համարժեք:

3. Անդամ պետությունները համագործակցում են իրենց կողմից լիազորված ճանաչված կազմակերպությունների հետ՝ այդ կազմակերպությունների կանոնների եւ ընթացակարգերի մշակման հարցում: Նրանք խորհրդակցում են ճանաչված կազմակերպությունների հետ՝ միջազգային կոնվենցիաների հետեւողական մեկնաբանությունն ապահովելու նպատակով:

Հոդված 12

Հանձնաժողովը, երկու տարին մեկ անգամ, Եվրոպական պառլամենտին եւ Խորհրդին տեղեկացնում է անդամ պետություններում սույն Հրահանգի իրականացման մասով գրանցված առաջընթացի մասին:

Հոդված 13

1. Անդամ պետությունները գործողության մեջ են դնում սույն Հրահանգի կատարման համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը եւ վարչական ակտերը մինչեւ 2011 թվականի հունիսի 17-ը: Նրանք դրա մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին:

Անդամ պետությունների կողմից այդ ակտերն ընդունելու դեպքում՝ դրանք պետք է հղում պարունակեն սույն Հրահանգին, իսկ պաշտոնական հրապարակման դեպքում՝ ուղեկցվեն նման հղումով:

Դրանք պետք է նաեւ նշում ներառեն այն մասին, որ գործող օրենքներում, կանոնակարգերում եւ վարչական ակտերում սույն Հրահանգով ուժը կորցրած ճանաչված հրահանգներին արված հղումները պետք է մեկնաբանվեն որպես սույն Հրահանգին կատարված հղումներ: Նման հղումներ կատարելու ձեւերը սահմանվում են անդամ պետությունների կողմից:

2. Անդամ պետությունները Հանձնաժողով են ներկայացնում ազգային իրավունքի հիմնական դրույթների տեքստը, որոնք նրանք ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտում:

Հոդված 14

I հավելվածի Ա մասում նշված հրահանգով փոփոխված թիվ 94/57/ԵՀ հրահանգն ուժը կորցրած է ճանաչվում՝ ուժի մեջ մտնելով 2009 թվականի հունիսի 17-ից՝ չհակասելով I հավելվածի Բ մասով սահմանված՝ հրահանգներն ազգային իրավունքում փոխատեղելու ժամկետների վերաբերյալ անդամ պետությունների պարտավորություններին:

Ուժը կորցրած հրահանգին հղումները համարվում են հղումներ սույն Հրահանգին եւ պետք է մեկնաբանվեն II հավելվածով սահմանված հարաբերակցության աղյուսակին համապատասխան:

Հոդված 15

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող 20-րդ օրը:

Հոդված 16

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Ստրասբուրգում, 2009 թվականի ապրիլի 23-ին:

Եվրոպական պառլամենտի կողմից՝

Նախագահ Հ.-Գ. Փոթերինգ

Խորհրդի կողմից՝

Նախագահ Պ. Նեչաս

[1] ՊՏ C 318, 23.12.2006թ., էջ 195:

[2] ՊՏ C 229, 22.09.2006թ., էջ 38:

3) Եվրոպական պառլամենտի 2007 թվականի ապրիլի 25-ի եզրակացություն (ՊՏ C 74 E, 20.03.2008թ., էջ 633), Խորհրդի 2008 թվականի հունիսի 6-ի ընդհանուր դիրքորոշում (ՊՏ C 184 E, 22.07.2008թ., էջ 11), Եվրոպական պառլամենտի 2008 թվականի սեպտեմբերի 24-ի դիրքորոշում (Պաշտոնական տեղեկագրում դեռ չհրապարակված), Խորհրդի 2009 թվականի փետրվարի 26-ի որոշում եւ Եվրոպական պառլամենտի 2009 թվականի մարտի 11-ի օրենսդրական որոշում (Պաշտոնական տեղեկագրում դեռ չհրապարակված):

[4] ՊՏ L 319, 12.12.1994թ., էջ 20:

[5] ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23:

[6] ՊՏ L 204, 21.07.1998թ., էջ 37:

[7] ՊՏ C 321, 31.12.2003թ., էջ 1:

[8] Տե՛ս սույն Պաշտոնական տեղեկագրի 11-րդ էջը:

[9] ՊՏ L 324, 29.11.2002թ., էջ 1:

ՀԱՎԵԼՎԱԾ I

ՄԱՍ Ա

Ուժը կորցրած ճանաչված հրահանգը՝ իր հետագա փոփոխություններով

(նշված՝ 14-րդ հոդվածում)

Խորհրդի 94/57/ԵՀ հրահանգ | ՊՏ L 319, 12.12.1994թ., էջ 20) |

Հանձնաժողովի 97/58/ԵՀ հրահանգ | ՊՏ L 274, 07.10.1997թ., էջ 8|

Եվրոպական պառլամենտի և Խորհրդի թիվ 2001/105/ԵՀ հրահանգ | ՊՏ L 19, 22.01.2002թ., էջ 9|:

Եվրոպական պառլամենտի և Խորհրդի թիվ 2002/84/ԵՀ հրահանգ | ՊՏ L 324, 29.11.2002թ., էջ 53|:

ՄԱՍ Բ

Ազգային իրավունքում փոխատեղման ժամկետների ցանկը

(նշված՝ 14-րդ հոդվածում)

Հրահանգ |Փոխատեղման ժամկետը|

94/57/ԵՀ |1995 թվականի դեկտեմբերի 31 |

97/58/ԵՀ |1998 թվականի սեպտեմբերի 30|

2001/105/ԵՀ |2003 թվականի հուլիսի 22|

2002/84/ԵՀ |2003 թվականի նոյեմբերի 23|

Համեմատական աղյուսակը

Հրահանգ 94/57/ԵՀ | սույն Հրահանգը| Կանոնակարգ (ԵՀ) թիվ 391/2009 |

1-ին հոդված | 1-ին հոդված | 1-ին հոդված |

2(ա) հոդված | 2(ա) հոդված| 2(ա) հոդված |

2 (բ) հոդված | 2 (բ) հոդված|— |

2(գ) հոդված | 2(գ) հոդված | — |

2(դ) հոդված | 2(դ) հոդված | 2(բ) հոդված |

2(ե) հոդված | 2(ե) հոդված | 2(գ) հոդված |

— | 2(գ) հոդված | 2(դ) հոդված |

2(զ) հոդված | 2(է) հոդված | 2(ե) հոդված |

2(է) հոդված | 2(ը) հոդված | 2(զ) հոդված |

2(ը) հոդված | 2(թ) հոդված | 2(է) հոդված |

2(թ) հոդված | 2(ժա) հոդված | 2(թ) հոդված |

— | 2(ժ) հոդված | 2(ը) հոդված |

2(ժ) հոդված | 2(1) հոդված | — |

2(ժա) հոդված | — | 2(ժ) հոդված |

3-րդ հոդված | 3-րդ հոդված |— |

4(1) հոդված, առաջին արտահայտություն | — | 3(1) հոդված |

4(1) հոդված, երկրորդ արտահայտություն | — | 3(2) հոդված |

4(1) հոդված երրորդ արտահայտություն | — | — |

4(1) հոդված, չորրորդ արտահայտություն | — | 4(1) հոդված |

— | — | 3(3) հոդված |

— | — | 4(2), (3), (4) հոդված |

— | — | 5-րդ հոդված |

— | — | 6-րդ հոդված |

— | — | 7-րդ հոդված |

5(1) հոդված | 4(1) հոդված | — |

5(3) հոդված | 4(2) հոդված | — |

6(1), (2), (3), (4) հոդված | 5 (1), (2), (3), (4) հոդված | — |

6(5) հոդված | — | — |

7-րդ հոդված | 6-րդ հոդված | 12-րդ հոդված |

8(1) հոդված, առաջին պարբերությո՞ւթ | 7(1) հոդված, առաջին ենթապարբերության (ա) կետ | — |

8(1) հոդված, երկրորդ պարբերությո՞ւթ | — | 13(1) հոդված |

8(1) հոդված, երրորդ պարբերությո՞ւթ | 7(1) հոդված, առաջին ենթապարբերության (բ) կետ | — |

— | 7(1) հոդված, երկրորդ ենթապարբերություն | 13(1) հոդված (երկրորդ ենթապարբերություն) |

8(2) հոդված | 7(2) հոդված | — |

8(2) հոդված, երկրորդ ենթապարբերություն | — | 13(2) հոդված |

9(1) հոդված | — | — |

9(2) հոդված | — | — |

10(1) հոդված, ներածություն | 8-րդ հոդված | — |

10(1)(ա), (բ), (գ), (2), (3), (4) հոդված | — | — |

11(1),(2) հոդված | 9(1), (2) հոդված | — |

11(3), (4) հոդված | — | 8(1), (2) հոդված |

12-րդ հոդված | 10-րդ հոդված | — |

13-րդ հոդված | — | — |

14-րդ հոդված | 11(1), (2) հոդված | — |

— | 11(3) հոդված | — |

— | 12-րդ հոդված | — |

— | — | 9-րդ հոդված |

15(1) հոդված | — | — |

— | — | 10(1), (2) հոդված |

15(2) հոդված | — | 10(3) հոդված |

15(3) հոդված | — | 10(4) հոդված |

15(4) հոդված | — | 10(5) հոդված |

15(5) հոդված | — | 10(6) հոդված, առաջին, երկրորդ, երրորդ և հինգերորդ ենթապարբերություններ |

— | | 10(6) հոդված, չորրորդ ենթապարբերություն |

16-րդ հոդված | 13-րդ հոդված | — |

17-րդ հոդված | 16-րդ հոդված | — |

— | 14-րդ հոդված | — |

— | 15-րդ հոդված | — |

— | — | 11-րդ հոդված |

— | — | 14-րդ հոդված |

— | — | 15-րդ հոդված |

— | — | 16-րդ հոդված |

— | — | 17-րդ հոդված |

— | — | 18-րդ հոդված |

— | — | 19-րդ հոդված |

Հավելված | — | I հավելված |

— | I հավելված |— |

— | II հավելված | II հավելված |